ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի N6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ – ի մաթեմատիկա /25 դասաժամ/, քիմիա /5 դասաժամ/, աշխարհագրություն / 6 դասաժամ/ , երաժշտություն /5 դասաժամ/, ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. *Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/,*
2. *Փաստաթուղթ /դիպլոմ/ << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,*
3. *Անձնագրի պատճենը,*
4. *Ինքնակենսագրություն /Ձև 4/,*
5. *Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,*
6. *Մեկ լուսանկար՝ 3x4 չափի*
7. *Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք*
8. *ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ 9:00-ից 13:00 բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 20-ին,*** ժամը 15:00-ին ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի N6 հիմնական դպրոցում. հասցեն ք. Մասիս, Շիրակի 1:

Տեղեկությունների համար զանգահարել 094-111-888 հեռախոսահամարով: